Այդ պաշտօնը ստանձնուեցաւ Միրզա Մահմէդ խանին։ Վերջին Էնզէլի հասնելուն պէս՝ ընդունեց Ռուսաց դեսպանութիւնից ընծաները և Շահի մօտ գնալիս ճանապարհին լսեց նորա սպանման լուրը։

Այլեւս չշարունակեց ճանապարհը և իրերը իւր հետ վերցրած՝ վերադարձաւ Գիլան և այն տեղից էլ ընտանիքի և թիկնապահների հետ միասին ուղեւորուեց դէպի Բագու։ Սպանել տուեց Շահի նշանակած Գալիմին և իրան հրատարակեց իշխող խան։ Կառավարելով խանութիւնը անկախ իրաւունքներով, նա բարեկամական յարաբերութեանց մէջ էր հարեւան խաների հետ, իսկ Ղուբայի Ֆեադալի խանի հետ, որը միւսներից վտանգաւոր կարող էր լինել նորա համար՝ ազգակցութեան մէջ մտաւ։ Իւր որդի Մելիք—Մահմէդ խանին ամուսնացրեց նորա հարազատ քրոջ Ֆեադմա սուլթանի հետ։

Այդպէս ապահովելով իւր խանութիւնը ներքին թշնամիներից, Միրզա Մահմէդ խանը իւր կնոջ Զէյնաբ խանումի հետ ուղեւորուեց Մէկկա, որտեղ և մեռաւ 1760 թ. իսկ կինը թիկնապահների հետ միասին վերադարձաւ Բագու։

Հաջի Միրզա Մահմէդ խանին յաջորդեց իւր որդի Մելիք—Մահմէդ խանը, որ ունէր մի որդի իր պապի անունով և կոչւում էր Միրզա Մահմէդ խան երկրորդ. նա ունէր եւս մի աղջիկ Փիր Զաղան խանում անունով. դոքա ծնուել էին Ֆեաթմա Սուլթան Բիահմբա մօրից։ Մելիք Մահմէդ խանը կառավարում էր Բագուայ խանութիւնը 21 տարի խաղաղութեամբ, առանց արտաքին յարձակումների ենթարկուելու, որովհետեւ նա ապաւինել էր իւր աներորդու հզօրութեանը. Ղուբայի Ֆեադալի խանին միւս խաները հպատակւում էին և իբրեւ աւատապետ բոլորն էլ հարկ էին վճարում։ Ով չէր հնազանդում՝ ենթարկւում էր մահուան պատժի. պատժի տեղն էլ նշանակուած էր Բագուն։ Դերբէնդի Մահմէդ Հուսէին խանը Ֆադալի խանի հրամանով աչքի լոյսից զրկուեցաւ, ուղարկուեցաւ Բագու, որ տեղ և մեռաւ կալանաւորութեան մէջ. իսկ Շիրվանի Աղասի խանը իւր որդկերանցով Ահմէդ խանով ու Մահմէդ խանով թաղուած են Բագուում. դոցա